ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ Օհաննա Գառգալոյանի և մաքսային ռիսկերի կառավարման վարչության մաքսային գանձումների համակարգման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Լիլիթ Մնացականյանի 2024թ. փետրվարի 4-ից 8-ը Բելգիայի Թագավորություն (ք.Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը

Օհաննա Գառգալոյան - ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ,

Լիլիթ Մնացականյան- ՀՀ ՊԵԿ մաքսային ռիսկերի կառավարման վարչության մաքսային գանձումների համակարգման բաժնի գլխավոր մաքսային տեսուչի ժ/թ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել), 2024թ. փետրվարի 4-ից 8-ը:

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն (ՀՄԿ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն ՀՄԿ շրջանակներում Կատարողականի արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակման (ԿԱԳՄՄ) աշխատանքային խմբի 1-ին նիստին:

ԿԱԳՄՄ աշխատանքային խումբը ստեղծվել է 2023 թվականին: Նիստին մասնակցել են ՀՄԿ անդամ պետությունների ներկայացուցիչները:

5. Քննարկված թեմաները՝

ԿԱԳՄՄ-ն առանցքային դեր ունի մաքսային իրազորությունների և իրավասությունների արդյունավետության գնահատման, ՀՄԿ հիմնական գործիքակազմի կիրառման գնահատման, ինչպես նաև ԿԱԳՄՄ-ն ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին համապատասխանեցնելու գործում:

Հանդիպման ընթացքում կարևորվեց անդամ պետությունների հանձնառությունը՝ ակտիվորեն աջակցելու ԿԱԳՄՄ ներդրմանն ու իրականացմանը՝ նորարարական, ամբողջությամբ թվայնացված հարթակի միջոցով:

Կատարողականի արդյունավետության չափման մեխանիզմները հիմնված են մաքսային մարմինների գործունեության 4 ուղղությունների վրա՝ առևտրի դյուրացում և տնտեսական մրցակցություն, եկամուտների հավաքագրում, իրավակիրարկում, անվտանգություն և հասարակության պաշտպանություն, ինչպես նաև կազմակերպչական զարգացում: Քննարկվեցին նաև ՀՄԿ կողմից մշակված և որոշ անդամ պետությունների կողմից ներդրված արդյունավետության գնահատման ցուցանիշների (KPI) ներդրման և կիրառման առանձնահատկությունները:

Այս համատեքստում հանդիպման ընթացքում քննարկվեց նաև ԿԱԳՄՄ կապը ՀՄԿ մյուս աշխատանքային մարմինների և դրանց շրջականերում իրականացված աշխատանքների հետ, կարևորվեց նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներգրավվածությունը:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպման մասնակիցները ներկայացրեցին կատարողականի չափման ազգային պրակտիկան և խոսեցին ազգային մակարդակում ԿԱԳՄՄ կիրառման վաղ արդյունքների, ինչպես նաև համակարգի տեխնիկական սպասարկման ընթացակարգի, առաջացող կարիքների բավարարման, գործնական

իրագործելիության ապահովման և մաքսային մարմինների սպասելիքների գերազանցման ուղիների մասին:

Քննարկման ընթացքում կողմերը կարևորեցին ԿԱԳՄՄ արդյունքների ռազմավարական օգտագործումը՝ որպես ապացույցների վրա հիմնված որոշումների կայացման հիմք, որն այնուհետև կապահովի անհրաժեշտ տեղեկատվության արդյունավետ ներդրումն ու կիրառումն ազգային մակարդակում:

Հանդիպման ընթացքում ելույթներ ունեցան ՀՄԿ գլխավոր քարտուղարի տեղակալը, կարողությունների զարգացման դեպարտամենտի տնօրենը, ինչպես նաև ԿԱԳՄՄ ներդրման փորձ ունեցող անդամ պետությունների ներկայացուցիչները:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման օրակարգում ներառված էր ԿԱԳՄՄ նախագահի և տեղակալի ընտրության հարցը: Մասնակից պետությունների ձայների մեծամասնությամբ ԿԱԳՄՄ նախագահ ընտրվեց Կանադայի սահմանային ծառայության գործակալության, իսկ փոխնախագահ՝ Ճապոնիայի մաքսային ծառայության ներկայացուցիչը:

Հանդիպման ավարտին անդամ պետությունների ձայների մեծամասնության հավանությանն արժանացավ և ընդունվեց ԿԱԳՄՄ հաղորդակցության և փոխգործակցության պլանը: Արձանագրվեց նաև, որ մոտ ժամանակներում ՀՄԿ կողմից հրատարակվելու է նաև ԿԱԳՄՄ ուղեցույցը:

Հանդիպման ընթացքում կարևորվեց անդամ պետությունների հանձնառությունը՝ ակտիվորեն աջակցելու ԿԱԳՄՄ ներդրմանն ու իրականացմանը՝ նորարարական, ամբողջությամբ թվայնացված հարթակի միջոցով:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման ընթացքում կարևորվեց անդամ պետությունների հանձնառությունը՝ ակտիվորեն աջակցելու ԿԱԳՄՄ ներդրմանն ու իրականացմանը՝ նորարարական,

ամբողջությամբ թվայնացված հարթակի միջոցով: Համաձայնություն ձեռք բերվեց ՀՄԿ այլ աշխատանքային խմբերի շրջանակներում ևս ներգրավվել և ակտիվորեն քննարկել ԿԱԳ մշակմանն ու ներդրմանն ուղղված աշխատանքներին: Կատարված աշխատանքների արդյունքներով պայմանավորվածություն ձեռք բերվեց խմբի հաջորդ նիստը նախատեսել 2024.4-րդ եռամսյակում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Օ. Գառգալոյան

Լ. Մնացականյան

12.02.2024